Ո՞վ կարող է միանալ Cal MediConnect առողջապահական ծրագրին:

Cal MediConnect ծրագիրը համատեղում է մեկ ծրագրում նպաստները, որոնք ստանում եք Medicare և Medi-Cal ծառայություններից: Դուք կարող եք միանալ **Cal MediConnect** առողջապահական ծրագրին, եթե օգտվում եք և Medicare, և Medi-Cal ծառայություններից (ինչը նշանակում է, որ դուք ունեք շահառուի երկակի իրավունք, որը նաև հայտնի է որպես Medi-Medi):

Ի՞նչ է ներառում այս փաթեթը:

- Տեղեկացեք Cal MediConnect առողջապահական ծրագրի նպաստների մասին:
- Տեղեկացեք, ինչպես օգտվել ձեզ ընձեռնված նպաստներից:
- Տեղեկացեք, ինչպես ընտրել ծրագիրը:

Որո՞նք են MediConnect առողջապահական ծրագրին միանալու մի քանի պատճառները:

- Դուք կարող եք ունենալ Առողջապահական խնամքի համակարգող, որը կօգնի ձեզ օգտվել անհրաժեշտ ծառայություններից:
- Դուք կարող եք օգտվել բժշկական փոխադրման ծառայությունից՝ մինչև 30 փոխադրում տարեկան:
- Դուք ունենում եք միայն մեկ քարտ և զանգելու համար մեկ հեռախոսահամար:
- Դուք ունենում եք տեսողության հետ կապված նպաստներ (աչքի զննում և ակնոցներ):
- Դուք օգտվում եք ձեզ համար անհրաժեշտ տնային և համայնքային ծառայություններից:

Ի՞նչ է առողջապահական խնամքի համակարգումը:

Cal MediConnect ծառայությունը ձեզ տրամադրում է Առողջապահական խնամքի համակարգող: Դա կարող է լինել բուժքույրը կամ առողջապահական խնամք ապահովվող այլ մասնագետ: Նա կլինի ձեր հաղորդակցման օղակը, որը կկազմակերպի ձեր խնամքը և կօգնի ձեզ ստանալ բոլոր անհրաժեշտ ծառայությունները:

Ի՞նչ է Cal MediConnect-ը:

Cal MediConnect-ը նոր տեսակի առողջապահական ծրագիր է: Այն համատեղում է Medicare և Medi-Cal ծառայությունների ձեր բոլոր նպաստները մեկ ծրագրում: Այն հեշտացնում է ձեզ համար անհրաժեշտ ծառայություններից օգտվելը: Այն նաև օգնում է ձեզ ապրել անկախ:

Cal MediConnect առողջապահական ծրագրերը համակարգում են առողջապահական խնամքի հետ կապված ձեր բոլոր կարիքները, այդ թվում՝

- Բժշկական և տեսողության հետ կապված խնամքը:
- Հոգեկան առողջապահական խնամք:
- Տնային և համայնքային հիմքով ծառայություններ (ինչպես, օրինակ՝ տնային պայմաններում օգնության ծառայություններ և տարեցների համար նախատեսված ցերեկային ծրագրեր):
- Դեղատոմսով դեղամիջոցներ:
- Բժշկական սարքավորումներ և պարագաներ:
- Թմրադեղերի կամ ալկոհոլի չարաշահումից ազատվելու ծրագրեր:

Cal MediConnect առողջապահական ծրագրերը հեշտացնում են ձեզ համար առողջությանը հետևելը: Այդ ծրագրերը նաև առաջարկում են լրացուցիչ նպաստներ, ինչպես, օրինակ՝ փոխադրումը և տեսողության հետ կապված խնամքը:

Ո՞վ կարող է միանալ **Cal MediConnect** ծրագրին:

Դուք կարող եք միանալ, եթե՝

- Օգտվում եք և Medicare, և Medi-Cal ծրագրերից:
- Ապրում եք հետևյալ համայնքներից մեկում.

  Los Angeles
  Orange
  Riverside
  San Bernardino
  Santa Clara
  San Diego
  San Mateo

Միանալն անվճար է:

- Միանալու համար զանգահարեք Health Care Options (Առողջապահական խնամքի տարբերակների ծառայություն՝) **1-844-580-7272** հեռախոսահամարով, երկուշաբթի-ուրբաթ, առավոտյան ժամը 8:00-ից մինչև երեկոյան ժամը 5:00-ը:
- TTY-ից օգտվողները կարող են զանգահարել **1-800-430-7077** հեռախոսահամարով:
- Զանգահարելիս դուք կարող եք խոսել ձեր լեզվին տիրապետող անձի հետ, որը կարող է օգնել ձեզ գրանցվել:
- Դուք կարող եք նաև անմիջապես զանգահարել ծրագրին:

Ի՞նչ նպաստներից և ծառայություններից ես կօգտվեմ **Cal MediConnect** ծրագրի շրջանակներում:

Cal MediConnect-ի շրջանակներում դուք օգտվում եք մեկ առողջապահական ծրագրից, որը տրամադրում է Medicare-ի և Medi-Cal-ի ձեզ անհրաժեշտ բոլոր նպաստները: Այն ներառում է դեղամիջոցները, սարքավորումներն ու պարագաները: Cal MediConnect ծրագիրն առաջարկում է ծառայություններ, ինչպիսիք են առողջապահական խնամքի համակարգումը, փոխադրումը և տևողության հետ կապված խնամքը: Որոշ ծրագրեր տրամադրում են լրացուցիչ նպաստներ:

Խնամք ստանալը հեշտ է:

Հարց ունենալու կամ օգնության կարիքի դեպքում՝ ձեզ միայն պետք է զանգահարել մեկ հեռախոսահամարով: Եվ ծառայություններից օգտվելու համար ձեզ միայ պետք է մեկ քարտ՝ Cal MediConnect-ի ձեր քարտը:

Դուք կարող եք ունենալ առողջապահական խնամքի անհատական համակարգող:

Ձեր ծրագիրը կարող է նշանակել առողջապահական խնամքի անհատական համակարգող կամ դուք կարող եք պատվիրել դրանցից մեկը: Դա բուժքույրն է կամ առողջապահական խնամք ապահովող այլ մասնագետ: Նա կարող է ապահովել, որ ձեր բժիշկները, դեղագործները և այլ մատակարարողներ միասին աշխատեն, որպեսզի օգնեն ձեզ հոգ տանելու ձեր առողջության մասին: Դուք կարող եք պլանավորել ձեր առողջության խնամքը առողջապահական խնամքի ձեր համակարգողի հետ միասին: Ձեր ընտանիքը կամ ընկերները կարող են ներառվել, եթե ցանկանում եք: Առողջապահական խնամքի ձեր համակարգողը նաև պետք է.

- Հարցնի ձեր կարիքների մասին և օգնի բավարարել դրանք:
- Լինի հասանելի ձեր զանգերի համար և ձեր կողմից հարցեր ունենալու դեպքում:
- Կազմակերպի ծառայություններ, որոնց կարիքը դուք կարող եք ունենալ, եթե ապրում եք առանձին (օրինակ՝ սննդի առաքում և անձնական խնամքի ապահովում):
- Օգնի ձեզ նշանակել հանդիպումներ, կազմակերպել փոխադրում, ստանալ լիազորություններ և ստուգել դեղատոմսերը:
- Օգնի ձեզ գտնելու ճիշտ մատակարարողներին:

Դեղամիջոցներ, սարքավորումներ և պարագաներ

Cal MediConnect ծրագիրը կտարածվի ձեր բոլոր դեղատոմսերի, բժշկական սարքավորումների և պարագաների վրա և կհամակարգի դրանք: Տեղեկացրեք ծրագիրը, եթե չեք ստանում այն, ինչի կարիքն ունեք:

Ատամնաբուժական նպաստներ

Որոշ ծրագրեր առաջարկում են ատամնաբուժական ծառայությունների նպաստներ: Հարցրեք ծրագրին ատամնաբուժական նպաստների մասին:

Ընտրովի նպաստները

Որոշ ծրագրեր առաջարկում են նոր նպաստներ, որոնք հեշտացնում են անկախ ապրելը, ինչպես օրինակ՝ հաշմանդամի բազկաթոռի թեքահարթակներ ձեր տանը կամ բռնատեղեր ձեր լոգարանում: Տեղեկացրեք ծրագրին ձեր կարիքների մասին:

Ինչպե՞ս է Cal MediConnect ծրագիրը համակարգում իմ խնամքը:

Cal MediConnect ծրագիրն օգնում է ստանալու ձեզ համար անհրաժեշտ խնամքը: Նաև հեշտացնում է խնամքը:

Այն սկսելիս դուք կանցնեք առողջապահական ռիսկերի գնահատում:

- Միանալուց հետո ձեզ հետ կկապվեն Cal MediConnect ծրագրից:
- Նրանք հարցեր կտան ձեր բժշկական պատմության վերաբերյալ ու ձեր ընթացիկ և հետագա առողջապահական կարիքների մասին: Սա հայտնի է որպես առողջական վիճակի գնահատում:
- Դուք կարող եք անցնել գնահատումն անձամբ, հեռախոսով կամ փոստով: Դա ձեր որոշումն է:

Ձեր առողջապահական ծրագիրը կարող է նշանակել անձնական խնամքի համակարգող:

Խնամքի համակարգողը փորձառու մասնագետ է, որը օգնում է ձեր առողջապահական խնամքի հարցում: Առողջապահական խնամքի համակարգողը կարող է.

- Պատասխանել ստավցող կամ անհրաժեշտ ծառայությունների մասին ձեր հարցերին:
- Միացնել ձեզ համայնքի ծառայություններին, ինչպես, օրինակ՝ Meals on Wheels (Սնունդ անիվների վրա ծառայությանը):
- Օգնել ձեզ բժիշկ գտնելու, լիազորություններ ստանալու և հանդիպումներ նշանակելու:
- Օգնել ձեզ կազմակերպելու փոխադրում՝ բժշկին այցելելու կամ դեղատոմսերը ստանալու համար:
- Օգնել ձեզ լուծելու խնդիրներ, որոնք կարող են առաջանալ ձեր առողջապահական ծրագրի, բժիշկի կամ առողջապահական խնամքի համակարգողի հետ կապված:
- Օգնել ձեզ ներկայացնելու ձեր բժիշկներին ճիշտ տեղեկատվություն:

Ձեր խնամքի թիմն աշխատում է միասին՝ ձեր համակարգված խնամքն ապահովելու համար:

Ձեր խնամքի թիմը մի խումբ բժիշկներ և այլ մատակարարողներ են: Նրանք կիսվում են ձեր առողջության վերաբերյալ տեղեկատվությամբ և աշխատում են միասին՝ ձեր խնամքը հոգալու նպատակով: Ձեր թիմը կազմվում է ձեր կարիքների հիման վրա: Այն ներառում է ձեզ, ձեր խնամքի համակարգողին և ձեր առաջնային խնամքը ապահովող մատակարարողին:

- Ձեր առողջապահական թիմում նաև կարող են ներառվել՝ մասնագետներ, ընտանիքի անդամներ, հիվանդապահներ, տնային օժանդակ ծառայություններ, տնային բժշկական օգնություն տրամադրողներ և այլ մատակարարողներ:

Ձեր առողջապահական խնամքի թիմը աշխատում է ձեզ հետ՝ ձեր խնամքի ծրագիրը կազմելու համար:

Դուք և ձեր խնամքի թիմը կազմում եք խնամքի ծրագիր միայն ձեր համար: Ձեր խնամքի ծրագիրը ներառում է այն ծառայությունները, որոնք ցանկանում եք և որոնց կարիքն ունեք: Դա օգնում է մատակարարողներին հասկանալ ձեր առողջապահական կարիքները, նպատակներն ու ցանկությունները: Ձեր վերջնական խնամքի ծրագիրը պետք է հաստատվի ձեր կողմից:

Ի՞նչ այլ ծառայություններ է առաջարկում **Cal MediConnect** ծրագիրը:

Երկարաժամկետ ծառայություններ և աջակցություն **(Long-Term Services and Supports, LTSS)**

Ձեր LTSS ծառայություններն ու մատակարարողները չեն փոխվում Cal MediConnect ծրագրի շրջանակներում: LTSS-ը ներառում է տնային պայմաններում օգնության ծառայություններ (In-Home Supportive Services, IHSS), տարեցների համար նախատեսված համայնքային ծառայությունները (Community-Based Adult Services, CBAS), տարեցների համար նախատեսված բազմակողմանի ծառայությունների ծրագիրը (Multipurpose Senior Services Program, MSSP) և խնամքը ծերանոցում:

- Cal MediConnect ծրագիրը կհամակարգի և կվճարի LTSS բոլոր ծառայությունների համար:
- Միանալով Cal MediConnect ծրագրին, ձեր IHSS ժամերը չեն կրճատվում: Փաստորեն, ձեր առողջապահական ծրագիրը կարող է դիմել համայնքին՝ ձեր կարիքները վերագնահատելու համար: Այն կարող է ավելացնել ձեր IHSS ժամերը: Դուք այնուամենայնիվ կարող եք վարձել, ազատել կամ կառավարել ձեր IHSS մատակարարողներին:
- Եթե դուք գտնվում են ծերանոցում, ապա դուք ստիպված չեք լինի փոխել այն, եթե ձեր առողջապահական ծրագիրը անհանգստացած չէ այնտեղ ստացվող բուժօգնության որակով:

Լեզվական ծառայություններ

Ձեր առողջապահական ծրագիրը օգնություն պետք է տրամադրի ձեր լեզվով: Դիմեք ձեր ծրագրին և մատակարարողներին՝ բանավոր թարգմանիչ և փաստաթղթերը ձեր լեզվով տրամադրելու համար: Նաև խնդրեք նշել այդ մասին ձեր բժշկական տվյալներում:

- Եթե խոսում եք Ամերիկյան ժեստերի լեզվով (ASL), ապա իրավունք ունեք օգտվելու ժեստերի լեզվի թարգմանչի օգնությունից:
- Լեզվական օգնությունը ներառում է բժշկական բանավոր թարգմանիչների ծառայությունները (հեռախոսով, եսակոնֆերանսի միջոցով կամ անձամբ): Այն նաև ներառում է ձեր լեզվով տպագրված նյութերի տրամադրումը:
- Ձեր ծրագիրը կարող է նաև ներառել մատակարարողների կամ անձնակազմին, որոնք խոսում են ձեր լեզվով:
- Դուք չպետք է վճարեք Cal MediConnect-ի բանավոր թարգմանիչներին:

Շարունակությունը՝ հաջորդ կողմում:

Նշանակված դեղամիջոցներ

Ես դեռ կունենա՞մ **Medicare Part D** ծրագրի կարիքը:

Ոչ, բոլոր դեղամիջոցների վրա կտարածվի Cal MediConnect ծրագիրը: Եթե օգտվել եք D Բաժնից նախկինում, ապա կստանաք նամակ, որը կհաստատի, որ ձեր բոլոր դեղատոմսերը կտրամադրվեն Cal MediConnect առողջապահական ծրագրի ներքո: Դա չի նշանակում, որ դուք կորցնում եք ձեր դեղատոմսային նպաստները:

Ինչպե՞ս կարող եմ վստահ բոլոր լինել, որ չեմ զրկվի դեղամիջոցից, եթե անցնեմ **Cal MediConnect** ծրագրին:

Առաջին անգամ Cal MediConnect ծրագրին միանալիս ձեր առողջապահական խնամքի համակարգողը կօգնի համոզվել, որ ունեք առնվազն 30 օրվա համար դեղամիջոցների պաշար: Այսպիսով, դուք չեք զրկվի դրանցից նոր ծրագրին անցնելիս:

Արդյո՞ք կարող եմ ստանալ բոլոր նույն դեղամիջոցները, որոնք ստացել եմ դրանից առաջ:

Cal MediConnect բոլոր ծրագրերը տարածվում են նույն դեղատոմսային դեղամիջողների վրա, որոնց վրա տարածվում էր Medicare D Բաժինը, սակայն ապրանքանիշերի անվանումները կարող են տարբերվել: Ձեր ծրագիրը կօգնի համոզվել, որ դուք կստանաք ձեզ անհրաժեշտ դեղամիջոցները:

Բժշկական պարագաներ

Միանալիս ծրագիրը պետք է համոզվի, որ դուք ամբողջությամբ ստանում եք բժշկական պարագաները:

Ինչպե՞ս է գործում Cal MediConnect ծրագիրը:

Cal MediConnect առողջապահական ծրագիրը առողջապահական խնամքի կառավարվող ծրագրի տեսակ է: Այս տեղեկագրում բացատրվում է, թե ինչ է այն նշանակում և ինչպես առավելագույնս օգտվել այս տեսակ ծրագրից:

Ի՞նչ է առողջապահական խնամքի կառավարվող ծրագիրը:

Դա ծրագիր է, որը համակարգում է մատակարարողների ծառայությունները, դեղամիջոցները, հիվանդանոցային խնամքը և հատուկ սարքավորումները՝ օգնելու կառավարել ձեր առողջությունը:

Ի՞նչ է մատակարարողների ցանցը:

Ցանցն իրենից ներկայացնում է առողջապահական խնամք մատակարարողների հատուկ խումբ, որը ներառում է՝ առաջնային խնամքի մատակարարողներ, մասնագետներ, դեղատներ, բուժքույրական խնամքի ծառայության հիմնարկներ: Այդ մատակարարողները աշխատում են միասին, որպեսզի բավարարեն ձեզ անհրաժեշտ բոլոր կարիքները:

Ի՞նչ է մատակարարողների խումբը:

Մատակարարողների խումբը (որը նաև հայտնի է որպես կլինիկական կամ բժշկական խումբ)՝ միասին աշխատող առողջապահական խնամքի մատակարարողների կազմ է: Նրանք կարող են գործել միևնույն գրասենյակում կամ ունենալ տարբեր գրասենյակներ: Ձեր ընտրած Cal MediConnect առողջապահական ծրագիրը կարող է պահանջել, որ ձեր ամբողջ առողջապահական խնամքը կատարի նույն մատարարարողների խումբը: Առողջապահական ծրագիրը կտեղեկացնի ձեզ այդ մասին:



Ի՞նչ է պետք իմանալ ցանցերի մասին:

- Դուք պետք է օգտվեք ձեր առողջապահական ծրագրի ցանցի մատակարարողներից:
- Մատակարարողները, որոնք ներառված չեն ձեր առողջապահական ծրագրի ցանցում, կոչվում են ցանցից դուրս մատակարարողներ:
- Կարող է նաև կարիք առաջանալ օգտվելու նույն խմբի մատակարարողներից՝ կախված ձեր առողջապահական խնամքի ծրագրից:
- Դուք կարող եք ընտրել մեկ այլ մատակարարողների խումբ ծրագրի ցանցի շրջանակներում:

Շարունակությունը՝ հաջորդ կողմում:

Ինչպե՞ս կարող եմ հանդիպում նշանակել մատակարարողին իմ առողջապահական խնամքի կառավարվող ծրագրի ներքո:

- Եթե նախկինում հանդիպել եք մատակարարողին, ապա հանդիպում նշանակելու համար զանգահարեք անմիջապես գրասենյակ:
- Եթե նոր եք միացել ծրագրին, ապա զանգահարեք ցանցի մատակարարողների ցուցակը ստանալու համար:
- Դուք կարող եք դիմել ծրագրին՝ օգնելու ընտրել մատակարարողին և հանդիպում նշանակել: Եթե ներառված եք Cal MediConnect ծրագրում, ապա ձեր խնամքի համակարգողը կօգնի ձեզ կատարել այդ:
- Եթե ներառված եք Cal MediConnect ծրագրում, դուք նաև կարող եք դիմել՝ հանդիպման համար և հանդիպումից հետո փոխադրելը կազմակերպելու համար:

Ի՞նչ է պետք անել, եթե իմ ծրագիրը չի տարածվում ինձ անհրաժեշտ ծառայության վրա:

- Եթե ձեր առողջապահական ծրագիրը կամ մատակարարողը մերժում, պակասեցնում կամ դադարեցնում են խնամքի ապահովումը, դուք կարող եք դիմել որոշումը վերանայելու և, հնարավոր է, այն փոփոխելու համար: Դա կոչվում է բողոքարկում: Օրինակ՝ դուք կարող եք բողոքարկել, եթե չեք ստանում ձեզ անհրաժեշտ դեղամիջոցը:
- Դուք նաև կարող եք բողոքարկել, եթե ձեր առողջապահական ծրագիրը չի վճարում ծառայության, բժշկական օգնության կամ նշանակված դեղամիջոցի համար, որը դուք արդեն ստացել եք:
- Դիմեք ձեր առողջապահական ծրագրին՝ բողոքարկումը ներկայացնելու մասին հարցնելու համար:

Ինչպե՞ս կարող եմ առավելագույնս նշանակել հանդիպումներ:

- ❑ Համոզվեք, որ վերցրել եք նպաստների նույնականացման քարտը կամ քարտերը հանդիպմանը ներկայանալիս: Այն ներառում է ձեր Medi-Cal և Medicare քարտերը: Եթե ներառվել եք Cal MediConnect ծրագրում, ապա դուք պետք է ունենաք ընդամենը մեկ քարտ:
- ❑ Բերեք ձեզ հետ հարցերի շարքը՝ ձեր մատակարարողի հետ դրանք քննարկելու համար:
- ❑ Եթե ցանկանում եք, ընտանիքի անդամը կամ հիվանդապահը կարող է ձեզ հետ միասին գալ հանդիպմանը:
- ❑ Եթե դեղամիջոցներեք ընդունում, բերեք դրանց ցուցակը ձեզ հետ: Եթե ներառվել եք Cal MediConnect ծրագրում, ապա զանգահարեք և տեղեկացրեք ձեր դեղամիջոցների մասին: Ծրագիրը կտեղեկացնի ձեր մատակարարողներին:
- ❑ Անհրաժեշտության դեպքում՝ մեկնելուց առաջ նշանակեք հաջորդ հանդիպումը:
- ❑ Եթե ներառվել եք Cal MediConnect ծրագրում, ապա կարող եք այցելությունների միջև դիմել ծրագրին հարցերով կամ հայտնել ձեր մտահոգությունների մասին:

Ի՞նչ է նախօրոք լիազորությունը:

Երբ դուք կամ ձեր մատակարարողը դիմում եք ծառայություն տրամադրելու համար (այդ թվում՝ բուժումներ անցկացնելու և դեղատոմսերի), ձեր առողջապահական ծրագիրը կարող է վերանայել այդ պահանջը: Այնուհետև ծրագիրը որոշում է, արդյոք դուք ունե՞ք այդ ծառայության կարիքը, մինչև դրա համար վճարելը: Ծրագիրը գրավոր հաստատում կամ մերժում է պահանջը: Այն հայտնի է որպես նախօրոք լիազորություն կամ նախավավերացում:

Ես կարո՞ղ եմ պահպանել իմ բժիշկներին և այլ մատակարարողներին:

Եթե միանում եք Cal MediConnect առողջապահական ծրագրին, ապա մատակարարողները (այդ թվում՝ ձեր առաջնային մատակարարողը) պետք է ընդգրկված լինեն ծրագրում: Դա կոչվում է ծրագրի ցանց:

Պարզեք, թե արդյոք ձեր բժիշկները **Cal MediConnect** ծրագրի մաս են կազմում:

Եթե կան բժիշկներ, որոնց ճանաչում և վստահում եք, ապա պարզեք, թե արդյոք նրանք ներառվա՞ծ են Cal MediConnect առողջապահական ծրագրում: Պարզելու համար դուք կարող եք.

- Զանգահարել ձեր համայնքում գործող Cal MediConnect առողջապահական ծրագրերին և հարցնել, թե արդյո՞ք ձեր բժիշկները ներառված են ցանցերում:
- Այցելել առողջապահական ծրագրերի կայքերը՝ տեսնելու մատակարարողի և դեղատների տեղեկատուները:
- Հարցնել ձեր բժշկին, թե արդյո՞ք նա ներառված է Cal MediConnect ծրագրում:
- Զանգահարե՛ք HICAP՝ **1-800-434-0222** հեռախոսահամարով: Նրանք կարող են օգնել ձեզ, որ պարզեք ձեր բժիշկների ներառված լինելը Cal MediConnect ծրագրում: HICAP-ը Առողջության ապահովագրության խորհրդատվության ու աջակցության ծրագիր է:

Եթե ձեր բժիշկները ՆԵՐԱՌՎԱԾ ԵՆ որպես **Cal MediConnect** ծրագրի մաս:

- Համոզվեք, որ միացել եք Cal MediConnect առողջապահական նույն ծրագրին, որում ներառված են ձեր բժիշկները:

Շարունակությունը՝ հաջորդ կողմում:

Ես կարո՞ղ եմ պահպանել իմ բժիշկներին և այլ մատակարարողներին:

Եթե ձեր բժիշկները ՉԵՆ կազմում **Cal MediConnect** ծրագրի մաս, ապա դուք կարող եք.

- Աշխատել ձեր խնամքի համակարգողի հետ, որպեսզի ընտրեք բժիշկների ձեր ծրագրի ցանցի ներքո:
- Ծրագրին միանալուց հետո որոշ ժամանակ դուք կարող եք հնարավորություն ունենալ տեսնելու ձեր ընթացիկ բժիշկներին: Դա կոչվում է՝ “խնամքի շարունակականություն:”
- Հարցրեք ձեր բժշկին, արդյոք նա մտածու՞մ է միանալ Cal MediConnect առողջապահական ծրագրին:

Ինչպիսի՞ք են մատակարարողների տարբեր տեսակները:

- Առաջնային խնամքի մատակարարող: Առողջապահական խնամքի մատակարարող, որն ապահովում է ձեր հիմնական խնամքը և ուղղում է այլ մատակարարողների մոտ: Նա կարող է լինել ընտանեկան բժիշկ, գործող բուժքույր կամ բժիշկի օգնական:
- Մասնագետ. Դա բժիշկ է, որը մասնագիտացած է բժշկության որոշակի ոլորտում: Օրինակ՝ սրտաբանները, ուռուցքաբանները, հոգեբանները և այլն:

Ինչպե՞ս կարող եմ ընտրել առաջնային խնամքի մատակարարողի **Cal MediConnect** առողջապահական ծրագրի շրջանակներում:

Որպես Cal MediConnect ծրագրի մասնակից դուք պետք է ունենաք առաջնային խնամքի մատակարարող: Ձեր առողջապահական ծրագիրը կարող է օգնել գտնել մեկին, որը բավարարում է ձեր կարիքները:

- Դուք կարող եք ինքնուրույն ընտրել կամ ծրագիրը կընտրի նրան ձեզ համար;
- Եթե չեք հավանում ձեր առաջնային խնամքի մատակարարողին, ապա կարող եք աշխատել ձեր առողջապահական ծրագրի հետ՝ գտնելու մեկ այլի:
- Ձեր առաջնային խնամքի մատակարարողը կարող է պատկանել բժշկական կամ մատակարարողների խմբին: Ձեր առաջնային խնամքի մատակարարողը կուղղի ձեզ նույն մատակարարողների խմբի ներքո մասնագետների մոտ՝ հատուկ վիճակներ բուժելու համար:

Ինչպե՞ս կարող եմ փոխել իմ մատակարարողին:

Դուք միշտ պետք է ունենաք մատակարարողներ, որոնց վստահում եք և որոնք բավարարում են ձեր կարիքները:

- Եթե դուք ըժգոհ եք ձեր խնամքից, ապա թույլ տվեք, որ մատակարարողի գրասենյակը տեղեկանա ձեր մտահոգությունների մասին:
- Եթե չեք ցանկանում կրկին նշանակել հանդիպում այդ մատակարարողի հետ, ապա կարող եք խնդրել տեսնելու մեկ այլի՝ նույն բժշկական խմբի ներքո: Կամ աշխատեք ձեր առողջապահական ծրագրի հետ՝ նոր մատակարարող կամ նոր բժշկական խումբ գտնելու:

Ի՞նչ անել, եթե իմ բժիշկները ներառված ՉԵՆ իմ **Cal MediConnect** ծրագրում:

Դուք կարող եք պահպանել ձեր բժիշկներին: Տեղեկացրեք Cal MediConnect ծրագրին, որ ցանկանում եք կատարել "խնամքի շարունակականության" պատվեր:

Եթե ձեր բժիշկը ՉԻ կազմում ձեր **Cal MediConnect** առողջապահական ծրագրի մաս, ապա դուք իրավունք ունեք պահանջելու "խնամքի շարունակականություն:"

Դուք կարողեք շարունակել ստանալ առողջապահական խնամքը ձեր բժիշկից 12 ամիս:

- Եթե ցանկանում եք շարունակել տեսնել ձեր բժիշկներին, ապա համոզվեք, որ դուք ունեցել եք նրա մոտ առնվազն 1 այց նախորդ 12 ամիսների ընթացքում:
- Ձեր բժիշկը պետք է պատրաստ լինի աշխատելու Cal MediConnect ծրագրի հետ և վճար ստանալու այդ ծրագրից:
- Ձեր բժիշկը պետք չէ ծրագրի ցանցից դուրս գտնվի որակի կամ այլ մտահոգությունների պատճառով:

Ինչպե՞ս խնդրել խնամքի շարունակականություն:

Նախքան Cal MediConnect առողջապահական ծրագիր ընտրելը՝ զանգահարեք ծրագրի կենտրոն կամ HICAP (1-800-434-0222) հեռախոսահամարով՝ պարզելու, թե արդյոք ձեր բժիշկները ներառվա՞ծ են ցանցում: Եթե բժիշկներից մեկը ներառված ՉԷ ցանցում.

1. Զանգահարեք ձեր Cal MediConnect առողջապահական ծրագրի կենտրոն և տեղեկացրեք, որ նախատեսել եք, որ խնամքը կատարի ձեր բժիշկը:
2. Տեղեկացրեք ծրագրին, որ ցանկանում եք շարունակել տեսնվել ձեր բժշկի հետ: Բժիշկը պետք է համաձայնվի աշխատելու ծրագրի ցանցի հետ: Ձեր բժիշկը կամ լիազորված ներկայացուցիչը կարող է ներկայացնել խնամքի շարունակականության պահանջ:

Խնամքի շարունակականությունը ժամանակավոր է:

Եթե ձեր բժիշկը չի միանում Cal MediConnect ծրագրին, դուք պետք է փոխեք բժշկին, ընտրելով նրան Cal MediConnect ցանցից: Դուք պետք է կատարեք ընտրությունը մինչև 12 ամսվա ժամանակահատվածի ավարտը: Ձեր առողջապահական ծրագիրն ու խնամքի համակարգողը կարող են օգնել ձեզ կատարել այդ փոփոխությունը:

Եթե ձեր բժիշկը չի միանում **Cal MediConnect** ծրագրին, դուք պետք է փոխեք բժիշկներին: Սակայն դուք իրավունք ունեք պահպանել ձեզ անհրաժեշտ ծառայությունների ստացումը:

Cal MediConnect ծրագրին միանալը արդյո՞ք կազդի իմ **IHSS**-ին կամ օգնության այլ ծառայությունների:

Եթե ստանում եք տնային պայմաններում օգնության ծառայություններ, ապա կարող եք պահպանել ձեր IHSS մատակարարողին և ժամերը Cal MediConnect առողջապահական ծրագրերին միանալիս:

Տնային պայմաններում օգնության ծառայություններ **(IHSS)**

Cal MediConnect ծրագրի շրջանակներում դուք կպահպանեք ձեր իրավունքը վարձելու, ազատելու և կառավարելու ձեր IHSS մատակարարողներին:

Ծերանոցներ

Եթե գտնվում եք ծերանոցում, ապա կարող եք մնալ այդ ծերանոցում, եթե այն համապատասխանում է որակի և անվտանգության ստանդարտներին: Եթե ցանկանում եք տեղափոխվել ձեր սեփական տուն կամ ընտանիքի անդամի տուն, ապա Cal MediConnect ծրագիրը կարող է օգնել ստանալու ծառայություններ, որոնք հարկավոր են անվտանգ ապրելու համար:

Զրուցեք ծրագրի կենտրոնի կամ խնամքի համակարգողի հետ, եթե ավել ժամերի կամ լրացուցիչ ծառայությունների կարիք ունեք:



Եթե որոշեք չմիանալ **Cal MediConnect** ծրագրին.

Միևնույն է, **Medi-Cal Managed Care** ծրագրի կարիքն ունեք: Ծրագիրը կհամակարգի ձեր **IHSS** և այլ երկարաժամկետ ծառայություններն ու օգնությունը:

Cal MediConnect խնամքի ձեր համակարգողը կարող է օգնել կազմակերպելու ձեզ համար անհրաժեշտ ծառայությունները:

Տեղեկացեք ձեր իրավունքների և պարտականությունների մասին

Որպես առողջապահական ծրագրի մասնակից դուք ունեք իրավունքներ և պարտականություններ: Դուք ունեք այդ իրավունքները Cal MediConnect, Medi-Cal Managed Care կամ PACE բոլոր ծրագրերում:

Դուք իրավունք ունեք.

- Արժանապատվորեն բուժում ստանալու, զերծ մնալով խտրականությունից՝ ռասայի, ազգային ծագման, տարիքի կամ սեռի տեսանկետից:
- Ժամանակին ստանալու անհրաժեշտ բժշկական ծառայություններից օգտվելու հնարավորությունը:
- Տեղեկանալու՝ երբ, որտեղ և ինչպես ստանալ անհրաժեշտ ծառայությունները:
- Մասնակցելու խնամքի մասին որոշումներին, այդ թվում իրավունք ունենալով հրաժարվելու բուժումից կամ ընտրելու մեկին, որը ձեր փոխարեն որոշումներ կկայացնի:
- Բուժում ստանալու մատակարարողների կողմից, որոնք փորձ ունեն և մասնագիտացված են ձեր վիճակի գծով:
- Ձեր բժշկական տվյալները, խնամքի ծրագիրը և բուժումը գաղտնի պահելու:
- Ստանալու ձեր բժշկական տվյալների և խնամքի ծրագրի պատճենը
- Վարձելու, ազատելու և կառավարելու ձեր IHSS մատակարարողին:
- Ունենալու մեկին, որն օգնում է ստանալու ձեզ համար անհրաժեշտ ծառայությունները:
- Խնամք ստանալու հնարավորություն հաշմանդամության դեպքում, այդ թվում՝ բրայլյան կամ խոշոր տպատառերից օգտվելու, ցանկության դեպքում:
- Լեզվական ծառայությունից օգտվելու, այդ թվում՝ բանավոր թարգմանիչների ծառայությունից օգտվելու և այլ լեզվով փաստաթղեր ստանալու ցանկության դեպքում:
- Բողոքարկելու այն ծառայությունների համար, որոնց տրամադրումը մերժվել կամ պակասեցվել է, նաև գանգատ (բողոք) ներկայացնելու ձեր առողջապահական ծրագրի վերաբերյալ:

Ձեր պարտականություններն են.

- Օգտվել ձեր առողջապահական ծրագրի ցանցի մատակարարողներից:
- Աշխատել մատակարարողի և առողջապահական ծրագրի հետ՝ անհրաժեշտ ծառայությունների համար նախօրոք լիազորություն (նախավավերացում) ստանալու համար:
- Տեղեկացնել ձեր առողջապահական ծրագրին խնամքի կարիքների և մտահոգությունների մասին:
- Տեղեկացնել ձեր առողջապահական ծրագրին և ձեր համայնքի Medi-Cal գրասենյակին ձեր կոնտակտային տվյալների ցանկացած փոփոխության մասին:

Ձեր իրավունքների մասին լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար զանգահարեք Կալիֆորնիայի սպառողի աջակցության գրասենյակ՝ **1-888-466-2219** հեռախոսահամարով:

Մտածու՞մ եք Cal MediConnect ծրագրին միանալու մասին:

Ահա այն չորս բաները, որոնք դուք պետք է իմանաք նախքան Cal MediConnect ծրագրին միանալը.

1 Գտեք ձեր տարածաշրջանում առկա ծրագրերը: Տեսեք **12**-րդ թերթի ցուցակը` ձեր համայնքում գործող առողջապահական ծրագրերի անվանումներն

2 ու հեռախոսահամարները գտնելու համար: Պարզեք, թե արդյոք ձեր առողջապահական խնամքի ծրագրերի

3 մատակարարողները պատկանու՞մ են Cal MediConnect ծրագրին:

4 Պարզեք, թե ինչպես պետք է ստանաք դեղատոմսերն ու բժշկական պարագաները և սարքավորումները: Եթե Cal MediConnect ծրագիրը կբավարարի ձեր բոլոր կարիքները կամ դրանց մեծ մասը, դուք կարող եք միանալ ծրագրին, զանգահարելով Առողջապահական խնամքի տարբերակների կենտրոն` **1-844-580-7272** հեռախոսահամարով: Դուք կարող եք նաև անմիջապես զանգահարել ծրագրին:



Cal MediConnect ծրագրեր

Օգտվեք այստեղ նշված համարներից՝ ձեր համայնքում գործող առողջապահական ծրագրերին դիմելու համար։

Los Angeles County

Ծրագրի անվանումը	Հեռախոսահամար	TTY
Anthem Blue Cross Cal MediConnect	1-888-350-3447	711
Blue Shield Promise Cal MediConnect Plan	1-855-905-3825	711
Health Net Cal MediConnect	1-888-788-5395	711
L.A. Care Cal MediConnect	1-888-522-1298	711
Molina Dual Options	1-855-665-4627	711

Orange County

Ծրագրի անվանումը	Հեռախոսահամար	TTY
OneCare Connect Cal MediConnect Plan	1-855-705-8823	1-800-735-2929

Riverside County

Ծրագրի անվանումը	Հեռախոսահամար	TTY
IEHP DualChoice	1-877-273-4347	1-800-718-4347
Molina Dual Options	1-855-665-4627	711

San Bernardino County

Ծրագրի անվանումը	Հեռախոսահամար	TTY
IEHP DualChoice	1-877-273-4347	1-800-718-4347
Molina Dual Options	1-855-665-4627	711

San Diego County

Ծրագրի անվանումը	Հեռախոսահամար	TTY
Blue Shield Promise Cal MediConnect Plan	1-855-905-3825	711
CommuniCare Advantage	1-888-244-4430	1-855-266-4584
Health Net Cal MediConnect	1-888-788-5805	711
Molina Dual Options	1-855-665-4627	711

San Mateo County

Ծրագրի անվանումը	Հեռախոսահամար	TTY
CareAdvantage CMC	1-866-880-0606	711

Santa Clara County

Ծրագրի անվանումը	Հեռախոսահամար	TTY
Anthem Blue Cross Cal MediConnect	1-855-817-5785	711
Santa Clara Family Health Plan	1-877-723-4795	711

Ի՞նչ անել, եթե որոշել եմ չմիանալ Cal MediConnect ծրագրին:

Cal MediConnect ծրագրին միանալը կամավոր է: Դա նշանակում է, որ միանալը՝ ձեր ընտրությունն է: Եթե նախընտրում եք չմիանալ Cal MediConnect-ին, դուք ունեք երկու տարբերակ: Դրանք թվարկված են աջ կողմում:

Եթե չեք միանում **Cal MediConnect** ծրագրին.

- Դուք կարող եք պահպանել սկզբնական Medicare կամ Medicare Advantage ծրագիրը:
- Դուք պետք է ունենաք Medi-Cal առողջապահական խնամքի կառավարվող ծրագիր՝ Medi-Cal ծառայություններից օգտվելու համար: Եթե չունեք **Medi-Cal** առողջապահական խնամքի կառավարվող ծրագիր, ապա պետք է միանաք մեկ ծրագրի կամ ձեզ համար այն պետք է ընտրվի:
- Ձեր տնային կամ համայնքային պայմաններում ստացվող ծառայությունները համակարգում է Medi-Cal առողջապահական խնամքի կառավարվող ծրագիրը, որին դուք միացել եք:

Տարբերակ 1.

Ընտրեք **Medi-Cal** առողջապահական խնամքի կառավարվող ծրագիրը և ձեր **Medicare** ծրագիրը կմնա նույնը Եթե չեք միանում Cal MediConnect ծրագրին, ապա կարող եք շարունակել ստանալ Medicare ծառայությունները, ինչպես ներկայումս: Բայց դուք պետք է միանաք Medi-Cal առողջապահական խնամքի կառավարվող ծրագրին, եթե դեռ ծրագրում ներառված չեք: Այսպիսով, դուք կարող եք օգտվել Medi-Cal ծրագրի նպաստներից, ինչպես, օրինակ՝ անհատական խնամքի ծառայությունները, փոխադրումը և պարագաները:
Medi-Cal առողջապահական խնամքի կառավարվող ծրագրերի մասին մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է այս փաթեթի թիվ **14 թերթում:**

Տարբերակ 2.

Միացում **PACE** ծրագրին (Տարեցների համար նախատեսված ամենը ներառող առողջապահական խնամքի ծրագիր)
PACE ռողջապահական ծրագրին միանալու համար դուք պետք է ունենաք այն ձեր փոստային դասիչի տարածքումում:
Դուք նաև պետք է.

- Ունենաք և Medicare, և Medi-Cal ծրագիր:
- Լինեք 55 տարեկամ կամ ավելի:
- Ի վիճակի լինեք անվտանգ ապրելու ձեր տանը կամ համայնքային պայմաններում:
- Բավարարեք բուժքույրական հիմնարկներին ներկայացվող պահանջներին: PACE կազմակերպությունը պետք է որոշի, թե արդյո՞ք դուք համապատասխանում եք այդ պահանջներին, և Department of Health Care Services Առողջապահության ծառայությունների վարչությունը պետք է հաստատի այդ որոշումը:

PACE-ի մասին մանրամասն տեղեկատվություն ստանալու համար այցելեք **www.calpace.org** կայքը կամ զանգահարեք **1-855-921-PACE (7223)** հեռախոսահամարով:

Տարբերակներ. Միացում **Medi-Cal** առողջապահական խնամքի կառավարվող ծրագրին

Եթե չեք ցանկանում միանալ Cal MediConnect ծրագրին, դուք պետք է ունենաք Medi-Cal առողջապահական խնամքի կառավարվող ծրագիր կամ PACE ծրագիր: Այս տեղեկագիրը նկարագրում է Medi-Cal առողջապահական խնամքի կառավարվող ծրագրերը:

Ձեր **Medicare** ծրագրի նպաստները չեն փոխվի:

Եթե ունեք Medi-Cal առողջապահական խնամքի կառավարվող ծրագիր, ապա ձեր Medicare ծրագրի նպաստները չեն փոխվում: Դուք կարող եք շարունակել այցելել Medicare ծրագրի ձեր հիվանդանոցներն ու մատակարարողներին: Դրանք չպետք է պայմանագիր ունենան ձեր Medi-Cal ծրագրի հետ, որպեսզի վճարվի դրանց կողմից ձեզ տրամադրված ծառայությունների դիմաց: Եթե ձեր Medicare ծրագրի ծառայություններ ստանալու հետ կապված խնդիրներ ունեք, ապա անմիջապես զանգահարեք **1-800-MEDICARE** (1-800-633-4227 հեռախոսահամարով): Կամ զանգահարեք Medicare ծրագրի կենտրոն, եթե ներառված եք դրանցից մեկում:

Ի՞նչ է փոխվում, երբ ես ունենում եմ **Medi-Cal** առողջապահական խնամքի կառավարվող ծրագիր:

Medi-Cal առողջապահական խնամքի կառավարվող ծրագիրը կառավարում է ձեր բոլոր երկարաժամկետ ծառայություններն ու օգնությունը (LTSS): Եթե ստանում եք բժշկական պարագաներ և սարքավորումներ, որոնց վրա տարածվում է Medi-Cal ծրագիրը, ինչպես, օրինակ՝ ինսուլինային պոմպեր, ծրագիրը պետք է դրանք տրամադրի: Այնուամենայնիվ, դուք պետք է ստանաք դրանք ծրագրի ցանցի մատակարարողներից:

Այս ծառայությունները ՉԵՆ փոփոխվում, եթե ունեք **Medi-Cal** առողջապահական խնամքի կառավարվող ծրագիր:

- Տնային պայմաններում օգնության ծառայություններ (IHSS)
- Տարեցների համար նախատեսված համայնքային ծառայություններ (CBAS)
- Տարեցների համար նախատեսված բազմակողմանի ծառայությունների ծրագիր (MSSP)
- Բուժքույրական հիմնարկների ծառայություններ

Դուք միշտ իրավունք ունեք վարձելու, ազատելու և կառավարելու ձեր IHSS մատակարարողներին:

Արդյո՞ք պետք է վճարեմ իմ **Medi-Cal LTSS** կամ **Medicare** ծառայությունների համար:

Դուք չպետք է հաշիվ ստանաք ձեր LTSS կամ Medicare ծառայությունների համար: Ձեր հաշվի դուրս գրումը կոչվում է “հաշվեկշռային հաշվառում”: Այն անօրինական է և դաշնային, և նահանգային օրենքով: Դուք պատասխանատվություն չեք կրում համավճարների, համաապահովագրության և պահումների համար՝ ձեզ տրամադրվող ցանկացած Medi-Cal կամ Medicare ծառայության դիմաց:

Միայն երկու պատճառներով ձեզ հաշիվ ներկայացնելը համարվում է նորմալ.

- Ձեր Medicare ծրագրի շրջանակներում դեղատոմսով դեղամիջոցի հատկացման համար կարող է գանձվել համավճար Extra Help մակարդակով:
- Որոշ մարդիկ Medi-Cal ծրագրի շրջանակներում վճարում են ամսեկան ծախսերի մասնաբաժինը:

Ծախսերի մասնաբաժնի մասին մանրամասն տեղեկատվություն ստանալու համար զանգահարեք ձեր համայնքի Medi-Cal ծրագրի գրասենյակ:

Ի՞նչ անել, եթե հաշիվ եմ ստացել առողջապահական խնամքի մատակարարողից:

Դուք կարող եք ստանալ բժշկական հաշիվներ, սակայն չպետք է վճարեք դրանց դիմաց: Փաստն այն է, որ դուք չպետք է վճարեք այդ հաշիվների դիմաց:

Ի՞նչ է պետք իմանալ հաշվեկշռայի հաշվառման մասին:

Եթե ունեք Medicare և Medi-Cal ծրագրեր, ապա առողջապահական խնամքի մատակարարողներն ու առողջապահական ծրագրերը չեն կարող ձեզնից գումար գանձել առողջապահական խնամքի ծախսերի դիմաց: Այդպիսի գանձումը կոչվում է "հաշվեկշռային հաշվառում" և այն անօրինական է և դաշնային, և նահանգային օրենքով:

- Օրենքով ձեզնից չեն կարող գանձել համավճարներ, համաապահովագրության գումարներ կամ պահումներ:

Բացառությամբ հետևյալ դեպքերի (երբ նման գանձումը նորմալ է համարվում).

1. Համավճարներ դեղատոմսով դեղամիջոցների համար:
2. Medi-Cal ծրագրի որոշ շահառուներ պետք է վճարեն ամսեկան ծախսերի մասնաբաժին: Ծախսերի մասնաբաժնի մասին մանրամասն տեղեկատվություն ստանալու համար զանգահարեք ձեր համայնքի Medi-Cal ծրագրի գրասենյակ:

Ի՞նչ անել, եթե հաշիվ եմ ստացել իմ առողջապահական խնամքի մատակարարողներից մեկից:

1. Չեք վճարում հաշվի դիմաց:
2. Անմիջապես կապվում եք ձեր առողջապահական ծրագրի հետ՝ այս հարցը լուծելու համար: Օգնության համար դուք նաև կարող եք դիմել HICAP:
3. Կապվեք ձեր առողջապահական խնամքի մատակարարողի հետ և տեղեկացրեք նրան, որ ունեք Cal MediConnect ծրագիր և ձեզ չպետք է հաշիվ ներկայացվի: Հաղորդեք նրանց, որ կապվեն ձեր առողջապահական ծրագրի կենտրոնի հետ:

Ձեր մատակարարողը պետք է անհապաղ միջոցներ ձեռնարկի՝ այդ հարցը լուծելու համար: Նրանք պետք է դադարեցնեն հաշվի հավաքագրման գործընթաց և աշխատեն վարկային հաշվետվությունների գործակալությունների հետ՝ ձեզ հաշիվ ներկայացնելու հետ կապված ցանկացած խնդիր լուծելու հարցով:

Ինչո՞ւ է մատակարարողը ինձ հաշիվ ներկայացնում:

Որպես առողջապահական խնամքի համար վճարման պատասխանատու՝ Medicare ծրագրից Cal MediConnect առողջապահական ծրագրին անցնելիս, մատակարարողը կարող է սխալմամբ ուղարկել ձեզ հաշիվը: Նահանգը սովորեցնում է մատակարարողներին կանխել սխալ հաշիվները:

Հաշվեկշռային հաշվառման մասին լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար դուք կամ ձեր մատակարարողը կարող եք զանգահարել Cal MediConnect-ի մարդու իրավունքների պաշտպանին՝ **1-855-501-3077** հեռախոսահամարով:



Այլ տարբերակներ. Տարեցների համար նախատեսված ամենը ներառող առողջապահական խնամքի ծրագիր **(PACE)**

Ի՞նչ է **PACE**-ն:

PACE-ը ծրագիր է, որը տրամադրում է համակարգված բժշկական խնամք 55 տարեկան և ավելի բարձր տարիքի քրոնիկ հիվանդություններ ունեցող կամ հաշմանդամ անձանց համար՝ օգնելու նրանց, որքան հնարավոր է, անկախ ապրելու նրանց տանը կամ համայնքում: **PACE** ծրագրի առողջապահական խնամքի թիմերը համակարգում են բժշկական, սոցիալական և տնային պայմաններում տրամադրվող խնամքի ծառայությունները՝ օգնելու մարդկանց հոգալու իրենց կարիքները նրանց համայնքում՝ ծերանոց կամ այլ խնամքի հիմնարկ տեղափոխվելու փոխարեն:

Արդյո՞ք **PACE** ծրագիրը տարածվում է **Medicare** և **Medi-Cal** իմ նպաստների վրա:

PACE ծրագիրը տարածվում է Medicare և Medi-Cal բոլոր նպաստների վրա: PACE ծրագիրը կհամակարգի առողջապահական խնամքի ձեր բոլոր կարիքները, այդ թվում՝ բժշկական խնամքի, հոգեբանական առողջապահական խնամքի ու տնային և համայնքային պայմաններում տրամադրվող ծառայությունները՝ առողջապահական ոլորտի գործին նվիրված մասնագետների թիմի օգնությամբ: PACE ծրագրերը ապահովում են խնամքը և տրամադրում են ծառայություններ տնային պայմաններում, համայնքի պայմաններում և PACE մասնագիտացված կենտրոններում: Եթե դուք լիազորված եք Medi-Cal ու Medicare ծրագրերին մասնակցելու, ապա PACE ծառայությունների դիմաց վճարվում է առանց որևէ լրացուցիչ գումարի:

Ո՞վ կարող է օգտվել:

PACE -ից օգտվելու համար դուք պետք է.

- Լինեք 55 տարեկան կամ ավելի
- Բնակվեք PACE կողմից սպասարկվող փոստային դասիչի տարածքում
- Ունենաք ավելի բարձր մակարդակի բուժման կարիք հաշմանդամության կամ քրոնիկ հիվանդության պատճառով
- Համապատասխանեք հմուտ բուժքույրական հաստատությանը ներկայացվող խնամքի պահանջին
- Ի վիճակի լինեք անվտանգ ապրելու տանը

Շարունակությունը՝ հաջորդ կողմում:

Որո՞նք են **PACE** ծրագրի նպատակները:

- Առողջապահական խնամքի մասնագետների թիմը, այդ թվում՝ բժիշկը, բուժքույրը, սոցիալական գծով աշխատակիցը, ֆիզիոթերապևտները, էրգոթերապևտներն ու դիետոլոգը համագործակցում են՝ օգնելու առողջապահական խնամքի որոշումներ կայացնելու:
- Ամբողջական բժշկական գնահատման անցկացում՝ վեց ամիսը մեկ կամ ձեր առողջական վիճակի փոփոխության դեպքում:
- Ձեր ընտանիքի անդամներին և այլ հիվանդապահների աջակցություն՝ հիվանդապահների ուսուցում, աջակցող խմբեր և հերթափոխող խնամք, որպեսզի օգնի ընտանիքներին պահելու իրենց հարազատներին համայնքում:
- PACE ծրագիրը տրամադրում է երկարաժամկետ ծառայություններ և օգնություն, այդ թվում:

PACE կենտրոնում		
• Առաջնային խնամքի ծառայություններ • Սոցիալական ծառայություններ • Վերականգնողական բուժումներ	• Անձնական խնամք • Օժանդակ ծառայություններ • Սննդային խորհրդատվություն	• Ժամանցային թերապիա • Սնունդ • Փոխադրում PACE կենտրոն և PACE կենտրոնից

Տանը կամ համայնքում		
• Բժշկական հուսալի սարքավորումներ • Նշանակված դեղամիջոցներ • Ատամնաբուժական, լսողության և տեսողության հետ կապված ծառայություններ	• Հոգեկան և պահվածքի առողջապահական ծառությունների • Խնամք ծերանոցում • Ոչ բժշկական փոխադրում դեպի նշանակված հանդիպումների և նշանակված հանդիպումներից	• Տնային խնամքի/անձնական խնամքի ծառայություններ • Տնային առողջապահական խնամք • Կարճատև հոսպիտալացում

Արդյո՞ք իմ մատակարարողը կփոխվի:

Այո: PACE ծրագրին միանալիս ձեզ տրամադրվում են առաջնային խնամքի բժիշկներ PACE-ի կողմից: Բացի այդ, տնային պայմաններում օգնության ծառայությունների (IHSS) տրամադրման վայրում PACE ծրագրի հմուտ և որակավորում ունեցող աշխատակիցները համակարգում են ձեր բոլոր տնային պայմաններում տրամադրվող բժշկական և անձնական խնամքի ծառայությունները:

Շարունակությունը՝ հաջորդ կողմում:

Լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար դիմեք ձեր համայնքի **PACE** ծրագրի կենտրոն.

Los Angeles County

Ծրագրի անվանումը	Հեռախոսահամար	TTY	Առցանց
AltaMed PACE	1-877-462-2582	1-800-735-2922	www.altamed.org/pace
Brandman Centers for Senior Care	1-855-774-8444	1-818-774-3194	www.brandmanseniorcare.org
WelBeHealth PACE - Coastline	1-800-734-8041	1-800-735-2922	www.welbehealth.com/coastline
WelBeHealth PACE - Pacific	1-800-851-0966	1-800-735-2922	www.welbehealth.com/pacific

Orange County

Ծրագրի անվանումը	Հեռախոսահամար	TTY	Առցանց
CalOptima PACE	1-855-785-2584	1-714-468-1063	www.caloptima.org

Riverside / San Bernardino County

Ծրագրի անվանումը	Հեռախոսահամար	TTY	Առցանց
InnovAge PACE	1-877-653-0015	711	www.innovage.com

San Diego County

Ծրագրի անվանումը	Հեռախոսահամար	TTY	Առցանց
Gary & Mary West PACE	1-760-280-2234	1-760-280-2279	www.westhealth.org
San Diego PACE	1-844-473-7223	Նշում չկա	www.syhc.org/sdpace
St. Paul's PACE	1-619-677-3800	1-800-735-2922	www.stpaulspace.org

Santa Clara County

Ծրագրի անվանումը	Հեռախոսահամար	TTY	Առցանց
On Lok PACE	1-855-973-1110	711	www.onlok.org/pace

Բառացանկ

Տվյալ փաթեթի շատ տերմիններ կարող անծանոթ լինել ձեզ համար: Ձեզ օգնելու նպատակով՝ մենք համագործակցել ենք World Institute on Disability (Հաշմանդամության հարցերով համաշխարհային ինստիտուտի) հետ, կազմելով ստորև ներկայացված բառացանկը, որում ներառված են լայնորեն կիրառվող տերմինները: Դուք նաև կարող եք տեսնել Disability Benefits 101 Glossary (Հաշմանդամության նպաստների 101 բառացանկը) հետևյալ հղումով՝ **http://ca.db101.org/glossary.htm.**

Բողոքարկում — եթե առողջապահական ծրագիրը մերժում կամ պակասեցնում է ծառայությունները, դուք իրավունք ունեք բողոքարկելու, պահանջելով վերանայել առողջապահական ծրագրի որոշումը: Բողոքարկումը կազմելու օգնության համար դիմեք մարդու իրավունքների պաշտպանին՝ 1-855-501-3077 հեռախոսահամարով:

Շահառու — անձ, որը ստանում է Medicare և/կամ Medi-Cal ծրագրի նպաստներ:

Cal MediConnect առողջապահական ծրագրեր — Առողջապահական ծրագրեր, որոնք համատեղում են Medicare և Medi-Cal ծրագրերի արտոնությունները մեկ առողջապահական ծրագրում:

Խնամքի համակարգող — Ապահովում է, որ ձեր բժիշկները, մասնագետները, դեղագործները, հիվանդապահները, սոցիալական ծառայության մասնագետները և այլ մատակարարողներ միասին աշխատեն ձեզ հետ՝ ձեր առողջության մասին հոգ տանելու նպատակով:

Ընտրության ձև — Ձև, որը դուք լրացնում եք առողջապահական ծրագիր ընտրելիս կամ փոփոխելիս: Ընտրության ձև ստանալու համար դիմեք Առողջապահական խնամքի տարբերակների կենտրոն՝ 1-844-580-7272 հեռախոսահամարով:

Տարեցների համար նախատեսված համայնքային ծառայություններ **(CBAS)** — CBAS կենտրոնները տրամադրում են ցերեկային առողջապահական խնամքի ծառայություններ, օրինակ՝ բուժքույրական, բուժողական, գործունեության և սնվելու հետ կապված ծառայություններ որոշակի քրոնիկական առողջական խնդիրներ ունեցող մարդկանց համար:

Համակարգված խնամքի նախաձեռնություն **(Coordinated Care Initiative, CCI)** — Ծրագիր, որն ուղղված է Medi-Cal շահառուների առողջական վիճակը և կյանքի որակը բարելավելուն, նաև առաջարկելով նոր տարբերակներ այն անձանց համար, որոնք իրավունք ունեն օգտվելու Medicare և Medi-Cal ծրագրերից: CCI ծրագիրը բաղկացած է երկու մասից. Cal MediConnect և Medi-Cal կառավարվող երկարաժամկետ ծառայություններ և օգնություն (մանրամասները ներկայացված են այս հասկացությունների բացատրություններում): CCI ներկայումս գործում է Կալիֆորնիայի 7 համայնքներում. Լոս Անջելես, Օրինջ, Ռիվերսայդ, Սան Բերնանդինո, Սանտա Կլարա, Սան Դիեգո և Սան Մատեո:

Համավճար (Համավճարում) — Ֆիքսված գումար, որը հնարավոր է հարկ լինի վճարել առողջապահական խնամքի ծառայության

Շարունակությունը՝ հաջորդ կողմում:

դիմաց, սովորաբար, ծառայությունը տրամադրելուց հետո: Գումարը կարող է տարբերվել՝ կախված ծառայության տեսակից: Նաև կարող է հարկ լինել համավճարում կատարելու, երբ ստանում եք լրացված դեղատոմս:

Երկակի իրավունքով շահառուներ — Անձինք, որոնք ստանում են և Medicare, և Medi-Cal ծրագրերի նպաստներ և իրավունք ունեն ներառվելու Cal MediConnect ծրագրում:

Գրանցվող — Անձ, որը գրանցված է առողջապահական ծրագրում:

Ծառայության դիմաց վճար **(Fee-for-Service, FFS)** — Երբ Medicare կամ Medi-Cal ծրագիրն ուղղակիորեն վճարում է ձեզ տրամադրված ծառայությունների դիմաց: Ծառայության դիմաց վճարի պայմանում դուք չեք ունենում առողջապահական ծրագիր:

Բողոքարկում — Առողջապահական ծրագրի սպասարկման վերաբերյալ բողոք ներկայացնելու միջոց:

Առողջապահական ծրագիր — Բժիշկների, մասնագետների, կլինիկաների, դեղատների, հիվանդանոցների և երկարաժամկետ առողջապահական խնամքի մատակարարողների խումբ, որն աշխատում է միասին ձեր կարիքները հոգալու նպատակով: Առողջապահական ծրագրերը նաև կոչվում են առողջապահական խնամքի կառավարվող ծրագրեր: Մարդիկ, որոնք գրանցվում են այդ առողջապահական ծրագրերում, կոչվում են “անդամներ” և ունեն առաջնային խնամքի մատակարարող, որն օգնում է ապահովել նրանց առողջապահական խնամքը:

Տնային և համայնքային պայմաններում տրամադրվող ծառայություններ **(HCBS)** — Ծառայություններ և այլ օգնություն, որոնք մարդիկ կարող են ստանալ Medi-Cal ծրագրով, որոնք օգնում են նրանց անկախ մնալ տանը կամ համայնքում:. HCBS-ն ներառում է. Տնային պայմաններում օգնության ծառայություններ, Տարեցների համար նախատեսված բազմակողմանի ծառայություններ
և Տարեցների համար նախատեսված համայնքային ծառայություններ:

Տնային պայմաններում օգնության ծառայություններ **(IHSS)** — IHSS ծրագիրն ապահովում է այն մարդկանց խնամքը տնային պայմաններում, որոնք առանց օգնության չեն կարող անվտանգ մնալ իրենց սեփական տանը: Հիվանդապահները կարող են օգնել՝ կերակուր պատրաստելու, տունը մաքրելու, անձնական խնամքի ծառայություններ տրամադրելու (օրինակ՝ լողացնել), բժշկական հանդիպումներին ուղղորդելու և այլ բժշկական խնդիրներ (օրինակ՝ ներարկումներ կատարելու կամ դեղամիջոցներ ընդունելը օգնելու) լուծելու հարցերում: Ձեր համայնքը հոգում է ձեր IHSS կարիքները: Լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար դիմեք ձեր համայնք կամ առողջապահական ծրագրի կենտրոն:

Երկարաժամկետ ծառայություններ և օգնություն **(LTSS)** —
Որոշ մարդիկ LTSS-ի կարիք ունեն, որն օգնում է նրանց գործունեության և առօրյա

Շարունակությունը՝ հաջորդ կողմում:

ապրելակերպի հարցերում: Այս օգնությունը կոչվում է LTSS և կարող է տրամադրվել բուժհաստատությունում կամ համայնքում: LTSS-ը ներառում է տնային և համայնքային պայմաններում տրամադրվող մի շարք ծառայություններ, ինչպես, օրինակ՝ Տնային պայմաններում օգնության ծառայությունները (IHSS), Տարեցների համար նախատեսված համայնքային ծառայությունները (CBAS) և Տարեցների համար նախատեսված բազմակողմանի ծառայությունների ծրագիրը (MSSP), որոնք, բացի այդ, անհրաժեշտության դեպքում ապահովում են խնամքը բուժքույրական ծառայությունների հիմնարկներում:

Medi-Cal — Կալիֆորնիայի Medicaid ծրագիր: Medi-Cal ծրագիրն առաջարկում է առողջության ապահովագրում Կալիֆորնիայի ցածր եկամուտ ունեցող բնակիչների համար:

Medicare — Դաշնային առողջապահական ծրագիր, որը տրամադրում է առողջության ապահովագրում 65 տարեկան կամ ավելի բարձր տարիքի, մինչև 65 տարեկան որոշակի հաշմանդամություն ունեցող և որոշակի հիվանդություններով տառապող անձանց համար: Դուք հնարավոր է լսել եք Medicare բաժինների մասին, որոնք ներառում են.

- **Medicare Part A** տարածվում է բժշկական խնամքի վրա, եթե գտնվում եք հիվանդանոցում կամ կարճ ժամկետով բուժքույրական ծառայությունների հիմնարկում:
- **Medicare Part B** տարածվում է սովորական բժշկական ծառայությունների վրա, ինչպես, օրինակ՝ բժշկի այցերը և կանխարգելիչ ծառայությունները: Այն նաև տարածվում է տնային պայմաններում առողջապահական խնամքի, հուսալի բժշկական սարքավորումների (ինչպես, օրինակ՝ սայլակը) և լաբորատոր ծառայությունների և պարագաների վրա (ինչպես, օրինակ՝ ինսուլինի պոմպերը):
- **Medicare Part C** հաճախ կոչվում է Medicare Advantage : Այն անհատական առողջապահական ծրագիր է, որը տրամադրում է Medicare ծրագրի և A և B բաժինների ապահովագրությունը:
- **Medicare Part D** տարածվում է դեղատոմսերով դեղամիջոցների մեծ մասի վրա անհատական ծրագրի ներքո:

Տարեցների համար նախատեսված բազմակողմանի ծառայությունների ծրագիր (MSSP) — Այս ծրագիրը տրամադրում է և սոցիալական, և առողջապահական խնամքի համակարգված ծառայությունները Medi-Cal ծրագրին բաժանորդագրված 65 տարեկան կամ ավելի բարձր հասակի անձանց համար, որոնք համապատասխանում են մասնագիտացված բուժքույրական հիմնարկներում պահվելու համար չափանիշներին: Բացի խնամքի համակարգված ծառայություններից, MSSP ծրագրի յուրաքանչյուր վայրում առկա են հիմնադրամներ, որոնք օգնում են անձանց

Շարունակությունը՝ հաջորդ կողմում:

մեալ համայնքներում, երբ սպառված են բոլոր այլ հանրային կամ մասնավոր ծրագրերի տարբերակները, ինչպես, օրինակ՝ փոխադրման և սննդի հետ կապված ծառայությունները:

Նախընտրելի դեղամիջոցների ցուցակ — Դեղամիջոցների ցուցակ, որի վրա տարածվում է դեղատոմսերով ստացվող դեղամիջոցներ առաջարկող առողջապահական ծրագիրը:

Առաջնային խնամքի մատակարարող — Ձեր հիմնական առողջապահական խնամքի մատակարարողը: Դա կարող է լինել բժիշկը, գործող բուժքույրը, մանկաբարձ բուժքույրը կամ բժշկի օգնականը: Նրանք օգնում են օգտվել ձեզ համար անհրաժեշտ բոլոր ծառայություններից, այդ թվում՝ մասնագետների խնամքից:

Բուժքույրական ծառայությունների հիմնարկներ — Բուժքույրական ծառայությունների հիմնարկներին վերաբերում են ծերանոցները և վերականգնման հիմնարկները, որոնք ապահովում են բուժքույրական, վերականգնողական և բժշկական խնամքը:

Ինչ է պետք հաշվի առնել՝ նախքան **Cal MediConnect** ծրագրին անցնելը

Այս պահին, երբ դուք մանրամասն տեղեկացված եք Cal MediConnect առողջապահական ծրագրերի մասին, ժամանակն է որոշելու, թե արդյոք ցանկանում եք միանալ որևէ մեկին: Ստորև ներկայացված են որոշ տեղեկություններ, որոնք պետք է հաշվի առնել Cal MediConnect առողջապահական ծրագիր ընտրելիս:

1 Արդյո՞ք ձեր մատակարարողներն աշխատում են **Cal MediConnect** առողջապահական ծրագրի հետ:

ա. Առաջին հերթին կազմեք ձեր մատակարարողների ցուցակը և նշեք ձեր կոնտակտային տվյալները ստորև աղյուսակում:

բ. Այնուհետև զանգահարեք ձեր առողջապահական ծրագրի կենտրոն և հարցրեք, թե արդյոք յուրաքանչյուր մատակարարողը ներառվա՞ծ է առողջապահական ծրագրի ցանցում:

գ. Հարցրեք առողջապահական ծրագրի կենտրոնին, թե արդյոք ձեր մատակարարողները պե՞տք է աշխատեն նույն կլինիկական կամ մատակարարողների խմբում: Եթե այո, ապա հարցրեք յուրաքանչյուր մատակարարողի կլինիկայի կամ խմբի անվանումը:

Մատակարարող/ Մասնագետ	Հեռախոսահամար	Առողջապահական Ա ծրագրում **(Health Plan A)**	Կլինիկայի/խմբի մատակարարող	Առողջապահական Բ ծրագրում **(Health Plan B)**	Կլինիկայի/խմբի մատակարարող

2 Ո՞ր դեղատներից կարող եք օգտվել:

Պարզեք, թե արդյոք ձեր դեղատունը գործու՞մ է Cal MediConnect առողջապահական ծրագրի հետ, և ինչպես կարելի է շարունակել ստանալ ձեր դեղամիջոցը ժամանակացույցով:

ա. Կազմեք ձեր դեղամիջոցների ցուցակը, օգտվելով ստորև ներկայացրած ձևից:

բ. Կապվեք առողջապահական ծրագրի կենտրոնի հետ, որին պլանավորում եք միանալ, և հարցրեք , թե արդյո՞ք նրանք օգտվում են ձեր դեղատնից: Եթե ոչ, ապա ստացեք դեղատների ցանկը, որոնցից կարող եք օգտվել:

գ. Հարցրեք ձեր առողջապահական ծրագրի կենտրոնում, թե արդյո՞ք այն տարածվում է ձեր դեղամիջոցների վրա, և ինչ է պետք անել, որպեսզի շարունակեք դրանք ստանալ:

Ընթացիկ դեղատուն	**Cal MediConnect Health Plan A** (առողջապահական Ա ծրագրի դեղատուն)	**Cal MediConnect Health Plan B** (առողջապահական Բ ծրագրի դեղատուն)

Շարունակությունը՝ հաջորդ կողմում:

Ինչ է պետք հաշվի առնել՝ նախքան **Cal MediConnect** ծրագրին անցնելը

2 Ո՞ր դեղատներից կարող եք օգտվել: Շարունակությունը՝

Դեղամիջոց	Դեղատոմսերի մատակարարող	Առողջապահական Ա ծրագրո՞վ:	Առողջապահական Բ ծրագրո՞վ

3 Եթե օգտագործում եք բժշկական պարագաներ կամ սարքավորումներ, դուք պետք է ստանաք դրանք մատակարարողներից, որոնք ներառված են **Cal MediConnect** առողջապահական ծրագրում:

ա. Կազմեք ձեր կողմից օգտագործվող բժշկական պարագաների և սարքավորումների ցուցակ:

բ. Դիմեք առողջապահական ծրագրի կենտրոն և հարցրեք, որտեղից կարող եք ստանալ բժշկական պարագաներն ու սարքավորումները: Վստահ եղեք, որ կստանաք այն, ինչի կարիքն ունեք:

գ. Cal MediConnect առողջապահական ծրագրին միանալիս դուք կարող եք խնդրել առողջապահական խնամքի համակարգողին օգնել ձեզ ստանալու ձեզ համար անհրաժեշտ պարագաներն ու սարքավորումները:

Բժշկական սարքավորումներ կամ պարագա (անվանում)	Ընթացիկ մատակարարող	**Cal MediConnect** Առողջապահական Ա ծրագրի մատակարարող	**Cal MediConnect** Առողջապահական Բ ծրագրի մատակարարող